ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 125 - Ա
18 հուլիսի 2013 թ.

<<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված ,,Հարյուր տոկոս՝ պետության սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության /նշանակման/ ընդհանուր կարգի,, 3-րդ կետի դրույթներով՝

որոշում եմ՝

1. Ս/թ սեպտեմբերի 10-ին նշանակել և անցկացնել ,,Վարդենիսի հիվանդանոց,, փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ:
2. Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին /բաժնի վարիչ՝ Ն. Մաթևոսյան/ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ